

ԱՆՎԱՆԱՐԱՅԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ստորոգայնությունը նախադասության գլխավոր հատկանիշն է, որի արտահայտման հիմնական միջոցը ստորոգյալն է: Այստեղից էլ այն մեծ ուշադրությունը, որ դարձվել ու դարձվում է ստորոգյալի էության, նրա դրսևորումների, տեսակների վրա: Հասկանալի է, որ սա վերաբերում է նախադասության հիմնական՝ երկկազմ տեսակին. այլ է միակազմ անդամ նախադասության յուրահատկությունը, որտեղ ստորոգումը շունի որոշակի ձևաչին-դիմաչին դրսևորում: Ստորոգյալի ուսումնասիրության խնդիրները լայն ծավալ ու կարևորություն են ստանում նաև այն պատճառով, որ նախադասության քերականական կարգերը դրսևորվում են հատկապես ստորոգյալի մեջ: Այնպես որ, քննել ստորոգյալը կամ նրա որևէ տեսակը նշանակում է անդրադառնալ նաև համապատասխան քերականական կարգերին, մասնավորապես նրանց դրսևորման յուրահատկություններին: Այս հարցերը տարբեր խորությամբ ու ընդգրկումով քննվել են հայ լեզվաբանության մեջ: Նշելի են հատկապես Ս. Պալասյանի, Մ. Աբեղյանի, Գ. Սևակի, Գ. Ջահուկյանի, Վ. Առաքելյանի, Ս. Աբրահամյանի, Ռ. Իշխանյանի, Ս. Գյուլբուրդյանի, Մ. Ասատրյանի, Ն. Պառնասյանի, Գ. Գարեգինյանի, Ա. Քյուրքչյանի և այլոց ուսումնասիրությունները:

Քննենք անվանաբայական ստորոգյալը՝ որպես բաղադրյալ ստորոգյալի տեսակ: Այս հարցի քննությունը կապվում է «նախադասության անդամ», «նախադասության պարզ և բաղադրյալ անդամներ» հասկացությունների հետ, որոնց վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ առկա են տարբեր կարծիքներ: Ստորոգյալի այս տեսակը ավանդաբար կոչվել ու կոչվում է բաղադրյալ անվանական ստորոգյալ: Անվանական է կոչվում այն պատճառով, որ նրա ստորոգելին անվանական բաղադրիչ է: «Անվանական բաղադրյալ ստորոգյալ» անվանումը, սակայն, առարկության տեղիք է տվել այն պատճառաբանությամբ, որ ստորոգյալի այս տեսակն էլ ունի բայական բաղադրիչ, ուրեմն և այն անվանական կոչվել ճիշտ չէ: Այսպիսի առարկությամբ, օրինակ, Ա. Քյուրքչյանը առաջարկում է ստորոգյալի այս տեսակը կոչել բայանվանական, քանի որ նրանում կան և՛ անվանական, և՛ բայական բաղադրիչներ: Ավանդական տերմինի վերաբերյալ առարկության մեջ, անշուշտ, կա ճշմարտություն: Բայց առաջարկվող բայանվանական տերմինը հարմար չէ այն առումով, որ այն հայ լեզվաբանության մեջ արդեն այլ իմաստով լայնորեն գործածվում է, և այդպիսի ստորոգյալը կարող է շփոթվել բայանվան հետ: Ի դեպ, ստորոգյալի այս տեսակը անվանական համարողները չեն ժխտել այդպիսի ստորոգյալի մեջ բայական բաղադրիչի առկայությունը, այլ նկատի են ունեցել ստորոգելի խոսքիմասային արտահայտությունը: Այլ կերպ՝ անվանական ստորոգյալ ասելով միշտ հասկացվել է անվանական բաղադրիչով (ստորոգելիով) բաղադրյալ ստորոգյալ: Եվ այսպես, այս տերմինը միշտ գործածվել է այդ վերապահությամբ ու պայմանականությամբ, իսկ պայմանականությունը տերմինաբանության մեջ ընդունված է: Այսուհանդերձ, կարծում ենք, որ ճշգրտությունը ավելի նախընտրելի է, քան պայմանական-

1 Տե՛ս Ա. Քյուրքչյան, Անվանական բաղադրյալ ստորոգյալը և նրա խնդիր ու պարզա լրացումները, Ե., 1975, էջ 12:

նությունը, ուստի մենք ևս նախապատվությունը տալիս ենք անվանաբայանկան տերմինին, ինչպես որ վարվել են Մ. Ասատրյանը, Ս. Գյուլրուզդյանը²։

Այժմ հայերենի ստորոգյալի մի բնորոշ հատկանիշի՝ հայերենում ստորոգյալի պարտադիր դիմայնության մասին, Այն իրավամբ համարվում է հայերենի առանձնահատկությունը, ի տարբերություն շատ այլ լեզուների։ Ավելացնենք, որ այդ յուրահատկությունն ըստ էության վերաբերում է մասնավորապես անվանաբայական բաղադրյալ ստորոգյալին, քանի որ խոնարհված բայով արտահայտված ստորոգյալն ինքնին արդեն քերականական դեմք ունի բոլոր լեզուներում։ Հայերենի անվանաբայական ստորոգյալի այդ յուրահատկությունը երևում է թեկուզև ռուսերենի համապատասխան կառույցի համեմատությամբ.

Նա ուսուցիչ էմ։ Я учитель.

Դու ուսուցիչ ես։ Ты учитель.

Նա ուսուցիչ է։ Он учитель.

Առհասարակ ստորոգյալի և մասնավորապես անվանաբայական ստորոգյալի գնահատման հարցում կարևոր հանգամանք է ստորոգյալի՝ որպես նախադասության անդամի ծավալի հարցը։ Ելակետ դարձնելով նախադասության բայական կառուցվածքը՝ այն տեսակետն է հայտնվել³, որ անվանական բաղադրիչ ունեցող ստորոգյալն կառուցվում բուն ստորոգյալը բայական բաղադրիչն է, իսկ անվանական բաղադրիչը նրա լրացումն է։ Անշուշտ, հայերենի նախադասության կառուցվածքը բայականություն է, քանի որ առանց բայի (դիմավոր բայի) նախադասություն կազմվել չի կարող, և բայը նրա կառուցվածքում պարտադիր և էական բաղադրիչ է։ Հմմտ. Հասմիկը տխրել է։ Հասմիկը տխուր է։ Այս երկու կառույցներում էլ բայը (տխրել է, է) կարևոր դեր է կատարում, Բայց շարահյուսական տեսակետից այդ դերերը տարբեր են։ Տխրել է առանձին վերցրած ինքնուրույն ստորոգյալ է, իսկ երկրորդ նախադասության է-ն ստորոգյալ չէ, այլ ստորոգյալի քերականական բաղադրիչ, որով դրսևորվում է ստորոգյալն հարաբերությունը, իսկ հարաբերվողը արտահայտված է տխուր բառով։ Ինչ դեր կատարում է տխրել բաղադրիչը առաջին նախադասության մեջ, այդ նույն դերը երկրորդ նախադասության մեջ կատարում է տխուր բաղադրիչը։ Տարբերությունն այն է, որ առաջին նախադասության տխրել բաղադրիչը ինքնուրույն բառ չէ, այլ՝ խոնարհված բայի նյութական մաս, իսկ երկրորդ նախադասության մեջ տխուր-ը ինքնուրույն բառ է, որի արտահայտած հատկանիշը է բաղադրիչով հարաբերվում, հանգուցվում է ենթակային։ Այսպիսով՝ հարաբերվողի և հարաբերիչի դրսևորման տեսակետից պարզ և բաղադրյալ ստորոգյալները տարբեր վիճակ են ներկայացնում, և հենց դրանով էլ տարբերվում են իրաբից։ Իմաստակառուցվածքային այս երկու բաղադրիչները և՛ արդ ստորոգյալի մեջ հանդես են գալիս միասնաբար՝ մեկ ամբողջական ձևաբանական միավորի մեջ (տխրել է, նաև՝ տխրեց, կտխրի), իսկ բաղադրյալ ստորոգյալի մեջ հանդես են գալիս երկու բառական միավորներով (տխուր և է)։ Ուրեմն՝ հատկանիշի և վերագրման արտահայտության շարահյուսական դերը, որ պարզ ստորոգյալի մեջ կատարում է խոնարհված բայն իր ձևաբանական բաղադրիչների միջոցով, երկրորդ օրինակում կատարվում է անվանական բաղադրիչի (ստորոգելի) և է հանգուցի միջոցով։ Նշանակում է՝ է-ն ինքնուրույն ստորոգյալ չէ, այլ ստորոգյալի քերականական բաղադրիչ, որ կատարում է վերագրման, հանգուցելու դեր։ Այսպիսով՝ տխուր է մեկ ստորոգյալ է, ըստ

² Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Ե., 1957, էջ 155; Ս. Գյուլրուզդյան, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Ե., 1958, էջ 105։

³ Խ. Իշխանյան, Դիմավոր բայը որպես շարահյուսական միավոր (Բանբեր Երևանի համալսարանի, 1958, № 1, էջ 46—54)։

որում՝ բաղադրյալ, անվանաբայական, քանի որ արտահայտված է անվանական և բայական բաղադրիչներով: Ի դեպ, ստորոգյալի, այս երկու՝ հարաբերվողի և հարաբերիչի կողմերը սոսկ ստորոգյալին բնորոշ հատկանիշներ չեն, այլ առհասարակ հատուկ են նախադասության անդամին: Այսպես, ենթական արտահայտում է առարկա (կամ որպես այդպիսին մտածված հատկանիշ, երևույթ) և որոշակի հարաբերություն ստորոգյալի հետ. որոշիչն արտահայտում է առարկայի հատկանիշ՝ որոշչային հարաբերությամբ հանդերձ: Նույնպիսի երկկողմանի քերականական արժեք ունեն նաև մյուս անդամները: Ստորոգյալը չի կարող բաղառություն կազմել: Ստորոգյալը սոսկ հարաբերություն չէ, այլ՝ ա) հարաբերվող, բ) որոշակի՝ ստորոգական հարաբերություն (որ դրսևորվում է ենթականի նկատմամբ): Այդ պատճառով էլ քերականության մեջ հատկանիշ են համարվում ոչ միայն բայական ստորոգյալների բառական իմաստը, այլև անվանական բաղադրիչները, քանի որ թե՛ մեկով, թե՛ մյուսով բնորոշվում է առարկան (ենթական):

Անդրադառնանք անվանաբայական ստորոգյալի ստորոգելիի արտահայտությանը: Նշենք, որ անվանական ստորոգելին կարող է արտահայտվել բոլոր խոսքի մասերով: Միայն թե տարբեր խոսքի մասեր տարբեր շափով ու տարբեր կերպ կարող են հանդես գալ այդ դերում: Անվանական ստորոգելիի դերում տարբեր խոսքի մասեր կարող են հանդես գալ, այսպես ասած, առաջնային ու երկրորդային կիրառություններով: Այս տեսակետից ամենատարածվածն ու հաճախագեղ կիրառությամբ հանդես են գալիս առարկա և առարկայի հատկանիշ արտահայտող բառերը, որոնք են՝ գոյականները, ածականները, առարկա ցույց տվող դերանունները: Օրինակ՝ Արմենը աշակերտ է: Արմենը խելացի է: Արմենը նա է:

Թվականը նույնպես կարող է հանդես գալ ստորոգելիի դերում: Ինչպես՝ Մեկ ձեռքի մատների քանակը հինգ է: Ութի և հինգի տարբերությունը երեմ է: Նրանց տունը այստեղից հաշված հինգերորդն է: Ինչպես տեսնում ենք, թվականը ստորոգելիի դերում գործածվում է սահմանափակ կառույցներում:

Մակբայները հազվագեղ են գործածվում ստորոգելիի դերում: Մակբայների մեծագույն մասը այդ գործառույթը չունի, օրինակ, արագորեն, դանդաղորեն, համեստաբար, եղբայրաբար, հանգամանորեն, հոռեկայս, վառ, վեհ, բերանսփվայր և այլն: Ուշագրավ է, որ մի շարք մակբայներ կարող են հանդես գալ ստորոգելիի գործառույթով, ինչպես՝ արագ, դանդաղ, կամաց, շտապ, միասին, միահամուռ, միաձայն, թեթևակի, եռակի, քառակի և այլն:

Ո՞րն է մակբայների միջև եղած գործառութային նշված տարբերության պատճառը: Դիտարկումները ցույց են տալիս, որ որպես օրինաչափություն, մակբայի ստորոգական և որոշչային կիրառությունների միջև կա որոշակի կապ: Որոշիչի դերում հանդես եկող մակբայները սովորաբար կարող են նաև ստորոգելիական կիրառություն ունենալ: Հմմտ. Արագ ընթացք: Մեքենայի ընթացքն արագ է: Դանդաղ շարժում: Նրա շարժումները դանդաղ են: Միաձայն որոշում: Այդ որոշումը միաձայն է: Շտապ միջոցառում: Միջոցառումը շտապ է: Նշենք, որ այս գործառութային հարաբերությունը բնական է և որոշ լույս է սփռում ստորոգյալի ու բորոշի իմաստաբանական և հապակցելիական առնչությունների վրա: Որոշիչը գոյականական անդամի լրացում է և առարկայի հատկանիշ է ցույց տալիս: Ստորոգյալը, ավելի ճիշտ անվանաբայական ստորոգյալի ստորոգելին ցույց է տալիս ենթականի հատկանիշը, իսկ ենթական գոյականական անդամ է: Այս երկու անդամների տարբերությունը հատկանիշի վերագրման եղանակի ու միջոցի մեջ է: Որոշիչը պարզապես ստորադասական հարաբերությամբ դրվում է գոյականական անդամի վրա, իսկ ստորոգելին գոյականական անդամին վերադրվում է ստորոգական հարաբերությամբ:

Կապերից ստորոգելի են ձևավորում կապվող բառի հետ միասին բնութագրական արժեք ունեցողները, ինչպես՝ աղբյուր, համար, մասին, վերաբերյալ, մոտ, վեհ, հեռու և այլն: Օրինակ՝ Լեզվի տեսչությունը կառավարություն

առոնթեր է: Այս ձեռնարկը բուժ ընդունվողների համար է: Այդ աշխատանքը նրա ուժերից վեր է: Հմմտ. կառավարությանն առնթեր լեզվի տեսչություն, բուժ ընդունվողների համար ձեռնարկ, ուժերից վեր աշխատանք:

Ստորոգելիի դերում այլ յուրահատկությամբ են հանդես գալիս շաղկապը, վերաբերականը, ձայնարկությունը: Այս խոսքի մասերը ստորոգելիի դերում կարող են գործածվել սահմանափակ կիրառություններում՝ անվանողական-գործառական⁴ փոխանունությամբ: Սա այն կիրառությունն է, երբ բառը գործածվում է ինքնանվանողական դերով՝ մակայնգվում: Ինչպես՝ Գրական հաս-լերենի նպատակի իմաստ արտահայտող հիմնական շաղկապը ուրպեսզի-ն է: Հալերենի ցուցական վերաբերականները ահա-ն է և ահավալիկ-ը:

Անվանողական-գործառական փոխանվան դերով որպես ստորոգելի կարող են գործածվել բոլոր բառերը (բոլոր խոսքի մասերը), լեզվական բոլոր միավորները (ձևաբանական, շարահյուսական, հնչյունական և այլն): Ինչպես՝ Հալերենի այբուբենի առաջին տառը ա-ն է: Հայերենի միջնալեզվային միակ բաղաձայնը յ-ն է: Այսպիսի կիրառությունները սահմանափակ են գործածության ոլորտով և հաճախականությամբ. գործածվում են հիմնականում լեզվաբանական գրականության մեջ, երբ խոսվում է լեզվի, նրա բաղադրիչ-ների միավորների մասին:

Անվանական ստորոգելին կարող է արտահայտվել նաև տարբեր կարգի բառակապակցություններով: Սակայն դրանք բոլորն էլ ունեն ընդհանուր գծեր. քերականական որոշակի հարաբերության մեջ են հանգույցի հետ, ընդհանրացված իմաստները կենտրոնացված են բառակապակցության գլխավոր բաղադրիչում, իսկ հատկանիշի որոշակի նյութական իմաստը պարունակում է ամբողջ բառակապակցությունը: Իմաստային կենտրոնը գտնվում է կախյալ բաղադրիչում: Այսպիսի բառակապակցությունը անբաժանելի է շարահյուսորեն, իմաստով և գործառությամբ:

Արժե կանգ առնել անվանական բաղադրյալ ստորոգելիի մի դրսևորման վրա. նկատի ունենք այն դեպքը, երբ այդպիսի ստորոգելիի կազմում կա շատ ընդհանրական իմաստով, որոշ առումով ձևական կիրառություն ունեցող գոյական բաղադրիչ: Ստորոգյալի կառուցում այդ գոյականը կատարում է ձևական գործառություն: Ընդհանրական իմաստով գոյականն արտահայտում է քերականական հարաբերությունը անվանական մասի հանգույցի հետ, մասնակցում է անվանական մասի ընդհանրացված իմաստի ձևավորմանը, իսկ անվանական մասի բուն նյութական իմաստն արտահայտվում է բառակապակցության կախյալ անդամի մեջ: Հետևաբար անվանական մասի որոշակի իմաստը կախված է լրացումից: Այսպես՝ Սպորտը լավ բան է: «Հիշողությունը կորցրած աշխարհը կորած աշխարհ է» (ԳԹ, 28. IX. 1990), Գիտին լավ տեսակի է (բաղցր տեսակի, կարմիր տեսակի, բարձր տեսակի, հնացրած տեսակի): Միևնույն գոյականը բառակապակցության մեջ կարող է ունենալ տարբեր իմաստային կշիռ բառական տարբեր զուգորդումներում: Այսպես՝ Մատիտը կանաչ գույնի էր: Մատիտը տաքեր գույնի էր: Առաջին օրինակում բառակապակցության անվանական մասի իմաստային կենտրոնը կախված ածականն է (հմմտ. Մատիտը կանաչ է), իսկ երկրորդ օրինակում ածականն ունի շատ ընդհանուր իմաստ: Գոյականն այստեղ կատարում է իմաստային տարբերակող գործառություն:

Անվանաբայական ստորոգյալի ստորոգելիի արտահայտության մեջ առանձնապես հետաքրքիր է նրա հոլովական արտահայտությունը⁵: Այս տեսակետից տարբեր հոլովներ տարբեր վիճակ են ներկայացնում և տարբեր

⁴ Ս. Արրահամյան, Քերականական փոխանունությունը ժամանակակից հայերենում (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր լիստ. գիտ./, 1962, № 10, էջ 38—40):

⁵ Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, ե., 1958, Ս. Արրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, 1975, Մ. Ասատրյան, նշվ. աշխ., Ս. Գյուլբերկյան, նշվ. աշխ.:

չափով են բնորոշ ստորոգելիի արտահայտման հարցում: Շարահյուսական այդ դերը ամենից առաջ բնորոշ է ուղղական հոլովին: Լինելով բառի ուղիղ ձևը և զործածվելով հանգույցի զուգորդումով՝ ուղղական հոլովը իր ամբողջ ծավալով դիմային հարաբերությամբ վերագրվում է ենթակային և այդպիսով չի առնչակցվում լրացական շարահյուսական դերերի հետ: Այդ պատճառով էլ ուղղականը հանգույցի զուգորդումով որոշակիորեն հանդես է գալիս որպես ստորոգելի: Օրինակ՝ «Զարենցի կամարը խորհրդանիշ էր» (ԳԹ, 21. XII. 1990): «Բայց այս ամենը երազներ են» (ԽՀ, 29. VIII. 1990): «Հայոց բարդին Ղարաբաղն է...» (ԳԹ, 8. IX. 1993): «Այդ խրխիչը մեծվաճ էր, տխրություն, մոռում, տաղնապ, վիշտ, հաղթանակ, ռզնչվածություն, հույս և հուսափափություն, զարմանք, րախիծ, անձկություն, տենդ, հիացմունք, ուրախություն, տեսիլ» (Գ, 1989, № 12, էջ 26): Ուղղականով արտահայտված ստորոգելիների մեջ հատուկ տեղ են գրավում այնպիսիները, որոնք հասկացական ծավալով համարժեք են ենթակային և այդ պատճառով էլ կարող են հեշտությամբ կատարել մեկը մյուսի դերը՝ փոխելով իրենց պաշտոնները: Ինչպես՝ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է: Հմտ. Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է:

Սեռական հոլովի ստորոգելիական կիրառությունը երկու կարգի է: Ուղղականի դեր կատարող փոխանուն սեռականը իր կազմավորումով է առնչվում սեռականի հետ, կազմվում է սեռականից, իսկ իր ավարտուն վիճակով այն ըստ էության ուղղական է և ուղղականի պես կարող է հանդես գալ ստորոգելիի դերում: Ինչպես՝ Այս տետրը Արմենին է: Այս հոտը մեր գյուղինն է: Այսպիսի ձևեր, իր բառական արտահայտությամբ լինելով սեռական (Արմենի, ղուղի), բերականական ձևավորման մեջ ներառում է ուղղականի արժեք ունեցող գոյականական ընդհանրական իմաստ, որն իր որոշակի իմաստային բովանդակությունն ստանում է խոսքի կամ իրադրության շնորհիվ: Շարահյուսական պաշտոնի ձևավորման մեջ վճռական դերը կատարում է այս վերջին հանգամանքը՝ բերականական ձևավորումը: Փոխանուն սեռականը, որպես ստորոգելի, լայն կիրառություն ունի, հանդես է գալիս իմաստային նոր բերանգնորդ: Դիտենք բնագրային օրինակներ. «Ում մտածողությունը ազգային չէ, նա այդ ազգիներ չէ» (ԽՀ, 2, VIII. 1990): «Թեև միտքը, այն արտահայտող նախադասությունը մեծ բանաստեղծին են, բայց նախադասությունն կաղապարը լեզվինն է, կա հայոց լեզվի մեջ» (ՍԱ, 10): «Մի՛ դիպեք մայրերի սրտին, մի՛ դիպեք, իրավունք չունեք, նրանք սոսկ ռեբը չեն, ազգի են, Գոյությունն սյուն են մայրերը» (Գ, 1987, № 11):

Տրական հոլովի հատկացական տարբերակի (ըստ յոթ հոլովի համակարգի՝ սեռական հոլովի) ստորոգելիական բուն կիրառությունը կապվում է նրա հատկանշային իմաստի հետ: Ընդհանրապես թեք հոլովների ստորոգելիական կիրառության մեջ որոշակի դեր է կատարում հատկանշային իմաստի առկայության հանգամանքը: Նորից անդրադառնալով հատկացական տրականին՝ նշենք, որ վերջինս այս դեպքում իմաստային տեսակետից որոշ առնչություն է ձեռք բերում ածականի (հարաբերական) հետ: Եվ այս առումով դրանք կարելի է համարել շարահյուսական համանիշներ: Այսպես՝ տղամարդու, երեխայի բառաձևերը սովորական հատկացական իմաստ ունեն և գործածվում են որպես հատկացուցիչ: Սակայն որոշակի կիրառություններում այս ձևերը ձեռք են բերում հատկանշային իմաստ և գործածվում որպես ստորոգելի: Ինչպես՝ Այս կոշիկը տղամարդու է: Նրա տրամաբանությունը երեխայի է:

Ինչպես կարելի է նկատել, նաև որոշակի հարաբերություն կա տրականի այս և փոխանվանական կիրառությունների միջև: Այս կոշիկը տղամարդու է նշանակում է «Այս կոշիկը տղամարդու կոշիկ է», միայն թե կոշիկ հատկացյալը որևէ կերպ չի ներառվել տղամարդու բառի մեջ, որը պաշտոնը

վարում է առանց հոգի, առանց լրացուցիչ քերականական ձևավորման (Հմմտ. Այս կոշիկը այդ տղամարդունն է): Այդ է պատճառը, որ տրականի հատկացական տարբերակի նշված երկու կիրառությունները պատասխանում են տարբեր հարցերի: «Այս կոշիկը այդ տղամարդունն է» նախադասության մեջ տղամարդու բառը պատասխանում է ո՞ւմ հարցին, իսկ «Այս կոշիկը տղամարդու է» նախադասությունում տղամարդու բառաձևին չի կարելի ո՞ւմ հարցը տալ. այն պատկանելություն չի արտահայտում, այլ նշում է կոշիկի տեսակը, բնորոշում է այն:

Բուն տրականը ստորոգելի է ձևավորում սովորաբար որոշակի կապակցություններում՝ արտահայտելով բնութագրող իմաստ: Տրական հոլովն այդ դերը կատարում է՝ դրվելով գերազանցապես սեռական հոլովի կամ հատկանիշ արտահայտող բառի ուղիղ ձևի վրա: Այսպես՝ Սևանն այժմ անցյալ տարվա մակարդակին է: Հմմտ. նաև՝ Սևանն այս տարի ևս նույն (նախկին) մակարդակին է: Տրականով արտահայտված բնութագրական իմաստն ունի դրսևորման յուրահատկություններ, որոնք պայմանավորված են բառերի իմաստային հատկանիշով, կապակցության բառական միջավայրով: Դա երևում է նրա կիրառություններում, օրինակ. «Պետության բոլոր օղակներն իրար հետ կապված են հաղորդակից անոթների սկզբունքով. ցածր է իրավական օղակի մակարդակը, ուրեմն նրա մակարդակին են մնացածները ևս» (Ծ. 2. IX. 1992): «Եվ թեև կնճռոտ հարցերը դեռևս չեն լուծված, բայց ես գտնում եմ, որ լուծման նախապայման են» (ԳԹ, 7. VII. 1989): «Հայկական գեղարվեստական կինոնկարների համար գրված նրա մեղեդիներն այսօր ամենից շուրթերին են» (ԳԹ, 25. IV. 1986): Շուրթերին են տվյալ դեպքում նշանակում է «միշտ երգում են», դրանով իսկ բնութագրում է մեղեդիները, նրանց սիրելի լինելը ամենքի համար: Ուրեմն շուրթերին տրականը ոչ խնդիր է, ոչ պարագա, այլ ստորոգելի: Հմմտ. Այդ գրքերը սեղանին են, որտեղ տրականով բոլորովին չեն բնութագրվում գրքերը, այլ ցույց է տրվում գրքերի տեղը:

Բացառական հոլովով ստորոգելիի արտահայտությունն հիմքում ընկած են այդ հոլովի հիմնական իմաստային հատկանիշները: Այս հարցում դեր են կատարում հատկապես հետևյալ յուրահատկությունները: Նախ՝ բացառականի ձևի հարաբերակցությունը հարաբերական ածականին, որի հիմքում ընկած է բացառականի բաղկացության իմաստը՝ առարկայի մի բանից կառմված, բաղադրված լինելը, որ այլ յուրահատկությամբ հատուկ է նաև հարաբերական ածականին: Ինչպես՝ Մատանին պատրաստված է ոսկուց (ոսկյա մատանի), մատանին ոսկուց է (ոսկյա է), հատակը պատրաստված է մարմարից, հատակը մարմարից է (մարմարյա է): Բնագրային օրինակներում յուրստացվում են ստորոգելիի այս կիրառության յուրահատկությունները. «Բայց չի մոխրանում հիշատակը... Հիշատակը արդյոք լույսերից է» (ԾԶ, 512): Հիշատակը կառմված է լույսերից (լուսե հիշատակ), հիշատակը լույսերից է (լուսե է): «Սակայն նրանք ևս օգտվում են «գեռևս Հոռմի ստրուկների կառուցած» նշանավոր ջրմուղից, որի խողովակները կապարից էին» (ԳԱ, 17. IX. 1991): Խողովակները պատրաստված են կապարից (կապարե խողովակներ), խողովակները կապարից են (կապարե են):

«Զէ որ, իրոք, մարդը երկաթից չէ: Եվ ոչ էլ սիրտն է քար» (ԳԹ, 18. IX. 1992):

Մարդը երկաթից չի ստեղծված, մարդը երկաթից չէ (երկաթյա չէ):

Բացառականի մյուս կիրառությունը, որ հատուկ է մասնական ստորոգելիին, այդ հոլովի մասնական իմաստով գործածությունն է: Այս կապակցությամբ արժե հիշել, որ կան մասնական իմաստով արտահայտվող տարբեր անդամներ, ինչպես մասնական ուղիղ խնդիր, մասնական ենթակա: Բնական է, որ կա նաև մասնական ստորոգելի, որը ծավալի տեսակետից՝ մասնականությունն իմաստով տարբերվում է ոչ մասնական ստորոգյալից, բայց նա նույնպես լիարժեք ստորոգյալ է՝ մասնականության իմաստով: Հմմտ. Սրանք Պարույր Սևակի գրքերն են: Ա) Սրանք Պարույր Սևակի գրքերն են, Անսկրդ-

բունքայնությունը Արամի հիմնական թերությունն է: Բ) Անսկզբունքայնությունը Արամի հիմնական թերություններից է: Ինչպես տեսնում ենք, մասնական բացառականով նույնպես բնութագրվում է ենթական, բայց այն հատկանիշի ընդգրկման տեսակետից համապարփակ չէ, մասնակի բնույթ ունի: Եվ իմաստային մասնակիությունը ենթադրել է տալիս, որ ենթական այդ ստորոգելիի նշած առումով ունի ավելի լայն բնութագրություն: Ա օրինակում հասկացվում է, որ Պարույր Սևակն ունի նաև այլ գրքեր, Բ օրինակից ենթադրվում է, որ Արամն ունի նաև այլ հիմնական թերություններ: Այս ենթադրվող իմաստները կարելի է համարել իմաստի ներակայման յուրահատուկ երևույթ, որ ձևավորվում է ձևաբանական միավորի շարահյուսական կիրառությամբ:

Ավելորդ չենք համարում ավելացնել, որ իմաստային մասնակիությունը կարող է արտահայտվել նաև գոյականի անորոշ առումով: Դա ցույց տանք լրագրային հոդվածից կատարված մի մեջբերումով: «Գնորի փոփոխվելը և խայտաբղետությունը շուկայական տնտեսության տարրերից են» (Ծ, 12, XI. 1992): Այս միտքը կարող էր ձևակերպվել նաև այլ կերպ. «Գնորի փոփոխվելը և խայտաբղետությունը շուկայական տնտեսության տարրեր են»: Այստեղ ևս բնութագրությունն արտահայտված է նույն մասնական հարաբերությամբ, միայն այն տարբերությամբ, որ բացառականի դեպքում ավելի է շեշտվում իմաստի մասնականությունը: Ավելացնենք նաև, որ եթե տարրեր բառը այդ նույն կիրառության մեջ վերցվեր որոշյալ առումով, ապա կվերանար մասնական իմաստը, և ենթական կբնութագրվեր համակողմանիորեն, այսինքն՝ գնորի փոփոխվելը և խայտաբղետությունը կդիտվեին որպես շուկայական տնտեսության նույնածավալ բնութագրություն: Այսպես՝ «Գնորի փոփոխվելը և խայտաբղետությունը շուկայական տնտեսության տարրեր են»:

Ահա մասնական բացառականով արտահայտված այլ ստորոգելիների օրինակներ, որոնցում մասնականությունը դրսևորվում է իմաստային տարբերության զննմամբ. «Նրանք միջին սերնդի մեր լավագույն ֆենադատներից են» (ԳԹ, 6. XI. 1987): Այս օրինակում ենթական բնութագրված է նույն իմաստի մասնականությամբ: Հմմտ. «Նրանք միջին սերնդի մեր լավագույն քննադատներն են», որտեղ ստորոգելին ոչ թե մասնական, այլ ընդհանրական իմաստ է արտահայտում:

«Արցախյան ծուխը հայ քնարերգության վերջին տարիների նվաճումներից է» (Դ, 9. X. 1990): Պետք է հասկանալ, որ հայ քնարերգությունը վերջին տարիներին ունի նաև այլ նվաճումներ: «Գյուղերի ամայացումը նաև մեր հանրապետության հոգսերից է» (ԳԹ, 22. I. 1988): Իմաստի մասնականությունից հասկացվում է, որ հանրապետությունը, բացի գյուղերի ամայացումից, ունի նաև այլ հոգսեր:

Բացառականով դրված ստորոգելին կարող է արտահայտել ծագման, ելակետի, սկզբնավորման իմաստ: Օրինակ՝ Նա Մուշից է: «Գաղիկ-ծաղումը ասորերենից է՝ իկ հայերեն փաղաքշական ձևով» (Դ, 3. IV. 1990): Տեղացի լինելու իմաստ արտահայտող Մուշից բացառականը համանիշ է մշեցի բառին: Վերջին նախադասության ասորերենից վերադրի իմաստը կարելի է արտահայտել ասորական թեմայով. «Գաղիկ-ծաղումը ասորական է...»: Առանձին դեպքերում այսպիսի փոխակերպումը կարող է հնարավոր չլինել, բայց դա վճռորոշ նշանակություն չունի, կարևորը հոլովաձևի մեջ արտահայտված իմաստի հատկանշային բնույթն է:

Բացառական հոլովը հաճախ հանդես է գալիս կապի կամ կապվող բառի հետ միասին՝ որպես ստորոգելի. այդ մասին վերը համառոտակի խոսվեց: Բերենք միայն երկու օրինակ: «Որևէ մեկին հավատ չընծայելը արամաբանությունից դուրս է» (Դ, 6. IV. 1990): «Դա համենայն դեպս իմ ուժերից վեր է» (ԳԹ, 30. XI. 1990):

Գործիական հոլովը նույնպես կարող է բնութագրական իմաստ արտահայտել և գործածվել ստորոգելիի դերում: Այսպիսի բնութագրումը յուրահա-

տուկ է և տարբեր է բացառականի համապատասխան իմաստից: Նրանում դեր է կատարում գործիականի հիմնական հոլովական իմաստը: Օրինակ՝ «կինն էլ անպաճույճ ճամփորդական հագուստով էր, լայնեղր գլխարկով, լայնափողք անդրավարտիֆով» (ՄԳ, 204): «Նա հագել էր կանաչ-կարմիր զգեստ, լիովին Սուրբ ծննդյանը հատուկ տեսքով էր» (ԳԹ, 21. XII. 1990): «Զեզ մոտ ավելի լավ է, մեզ մոտ այլ մակարդակով է» (ՍՀ, 9. VII. 1987): Վերջին գործիականով արտահայտված ստորոգելիի ածականական իմաստը հաստատվում է նաև նույն նախադասության առաջին բաղադրիչում գործածված ստորոգելիի ածականական արտահայտությամբ (ավելի լավ է): Բարդ համադասական նախադասության բաղադրիչների հարաբերակից բնութագրումները սովորաբար կատարվում են համարժեք բառական միավորներով:

Գործիականի հատկանշական իմաստն ավելի ակնհայտ է հետևյալ օրինակներում: «Գինով էի ես... Ու իմ կարոտը հեծկտում էր խուլ» (ՎԴ, 146): «Ամեն ինչ երգ է, շշուկ, երբ սիրտը խենթ է ու գինով» (ԵԶ, 296): Նշանածիս գերդաստանը շատ խղճով է» (ՄԴ, 43): «Այդպիսի արտասովոր տոնի գաղափարը շատերի սրտով էր» (ԽՀ, 24. VIII. 1990):

Ներգոյական հոլովը ստորոգելիի դերում սովորաբար հանգես է գալիս այլ բառի, հատկապես ածականի հետ զուգակցված, և բնութագրող իմաստը ստորոգելին ստանում է հատկապես ածականի շնորհիվ: Օրինակ՝ «Ես զլխավոր դերում էի» (ԳԹ, 29. V. 1987): «Այն հիմնականում լավ վիճակում է» (Գ, 1986, № 5, էջ 17): «Գանձասարն արդեն գործող եկեղեցիների շարքում է» (ԳԹ, 6. IX. 1989): «Աղետալի վիճակում է տնտեսությունը» (ԳԹ, 27. III, 1992):

Այսպիսով, բոլոր հոլովների՝ ստորոգելիի դերում հանդես գալիս պայմանավորված է նրանցում հատկանշային իմաստի առկայությամբ, որով և բնութագրվում է ենթակայով արտահայտված առարկան: Այս երևույթն ավելի որոշակի ներկայացնելու նպատակով կատարենք մի համեմատություն: Հիվանդը ծանր վիճակում է: Հիվանդը կանաչապատ բակում է: Ծանր վիճակում կապակցությունը բնութագրում է հիվանդի դրությունը առողջական վիճակի տեսակետից և պատասխանում է ինչպե՞ս է հարցին: Ուրեմն այդ կապակցությունը ստորոգելի է: Կանաչապատ բակում կապակցությունը հիվանդի վերաբերյալ բնութագրական ոչ մի դեր չի կատարում, ցույց է տալիս հիվանդի տեղը, պատասխանում է ուրե՞նք հարցին և տեղի պարագա է:

Ամփոփելով անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի անվանական ստորոգելիի հոլովական արտահայտության համառոտ քննությունը՝ նշենք, որ տարբեր հոլովների շարահյուսական այդ կիրառության մեջ դեր են կատարում տարբեր գործոնների՝ հոլովական և բառական իմաստների զուգորդումները: Շարահյուսական գործառույթը հանդես է գալիս բառական և ձևաբանական միջոցների բարդ ու հետաքրքրական համատեղումով: Այսպիսի կիրառությունները շարահյուսական տեսակետից տարբերվում են հոլովների լրացական կիրառություններից: Բառի և բառաձևի իմաստային ու քերականական հատկանիշների փոխհարաբերության, զուգորդման քննությունը լույս է սրբում համապատասխան բառաձևերի շարահյուսական կիրառությունների և մասնավորապես ստորոգելիի ու լրացական հարաբերությունների արտահայտության գնահատման վրա:

ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ — Գարուն

ԳԱ — Գրքերի աշխարհ

ԳԹ — Գրական թերթ

Դ — Դպրություն

Ե — Երկիր

ԵԶ — Եղիշ Զարենց, Երկեր, Ե., 1983:

ԽՀ — Խոտորդային Հայաստան

ՄՂ—Մարդո Ղուկասյան, Տեսքդ պահեմ աշքերիս սեշ, Ե., 1987:

ՍԱ—Սերգեյ Արթուրյան, Հայոց լեզու, Ե., 1987:

ՍԳ—Սիրակ Գյուլբաղյան, Թեւադրութեան նյութերի ժողովածու, Ե., 1991:

ՍՀ—Սովետական Հայաստան

ՎԴ—Վահան Դավթյան, Երկեր, հ. 1, Ե., 1985:

СОСТАВНОЕ ИМЕННОЕ ГЛАГОЛЬНОЕ СКАЗУЕМОЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. Г. БАРСЕГЯН

Р е з ю м е

Исследование именного глагольного сказуемого как типа составного именного сказуемого является одним из спорных вопросов арменистики.

Сказуемое—не отношение само по себе, но: а) соотносимый член, б) определенное отношение (которое проявляется касательно подлежащего). Именно по этой причине как признак в грамматике рассматривается не только лексическое значение глагольного сказуемого, но и именная составляющая, поскольку как первое, так и второе характеризует предмет (подлежащее). Исследование падежной формы предикатива составного именного глагольного сказуемого показывает, что в таком синтаксическом употреблении падежной формы играет роль сочетание двух факторов: падежное и лексическое значение. С точки зрения синтаксиса они отличаются от функции падежей как второстепенных членов предложения. Так, հիվանդը ծանր վիճակում է (Больной в тяжелом состоянии) /предикатив/, а հիվանդը կանաչապատ րիկում է (Больной в зеленом дворе) /обстоятельство/.

Гот факт, что существительное в любом падеже может выступать в роли предикатива, обусловлен наличием в значении этих существительных семы признака (в широком смысле), чем и характеризуется предмет, выраженный подлежащим.